

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ

**Հայի անցեալի եւ ներկայի մասին տեսութիւն.**

ՏI գարում հայկական պետութիւնները պաշտպանութիւն չը գտնելով Բիւղանդիայից, այլ և այդ հնագարեան անմիտ հրէշի թակարդն ընկնելով, հետզհետէ կործանուում են և ժողովուրդը թողնելով հայրենի երկիրն ու իւր բնիկ քաղաքները յունական Փոքր-Ասիական քաղաքներն է տեղափոխուում։ յունաց հովանաւորութեան տակ խաղաղ ապօնուու յուսով առանում իւր ձեռքը պանդխտութեան ցուալը . . . Հայաստանի թնիկ տէրերը հայ իշխանները կամովին տարագրւում են օտարութիւն, անտէր թողնում իրանց պետութիւնները, ինչպէս անխոհեմութեամբ, այդ շրջանից 600 տարի առաջ, այդ իշխանների նախնիքը հայ պետութեան ընկեր տիրոջը, Արշակունի Արտաշէս Գ-ին թողին Պարսկաստանում և հայ երկիրը մատնեցին Պարսից թագաւորին ու նրանից կարգուած մարզպաններին։ Ե. գարի անտէրութիւնը գեռ նրանով տանելի էր, որ քաղաքները և գիւղերը իրանց սեպհական տէրերից չզրկուեցին, որոնք, այդ տէրերը, հարկաւոր ժամանակ պաշտպանեցին ժողովրդին, բայց ՏI գարում թէ քաղաքի և թէ գիւղի ազգաբնակութիւնը մընում է բաղդի բերմանքին . . . : Հայաստանը ինչպէս մի համեղ պատառ ծւեկ-ծւեկ է լինում նախ՝ Բիւղանդական պետութիւնից, որ գիւղական նենդութիւն և ատելութիւն ունէր դէպի հայերը, վերջինիս, ոչ այնքան քաղաքական, որքան դաւանաբանական-աստուածաբանակտն մի քանի կէտէրում յոյների հետ համերաշխ չը լինելու պատճառով, և ապա՝ մոնղուներից, որոնք հեղեղի նման յորձանք տալով, խումբ խումբ արշաւում են Առաջաւոր Ասիա, ճանապարհին սրի և հրի մատնելով ամենայն ինչ։ Զարմանալի առպատակաւոր էին սրանք. ոչ պարսիկները, ոչ արևելեան նախնի աշխարհակալները, ոչ հռոմայիցիք, ոչ արաբները ոչ նոյն իսկ յոյները և ոչ յետոյ որ և է ազգ այդպիսի միջոցով-սրավ և անպատճառ հրով չէ մարտնչել որ և է ժամանակ։ Մոնղուների հետ գործ ունեցող ազգը, եթէ նոյն սրով և հրով չէր գիմադրում, միշտ տուժում էր և ոչընչացման ենթարկւում . . . Մոնղուական ցեղերը Առաջաւոր Ասիայում զանազան անուններ են կրում, իրանց առաջնորդները անուան համեմատ . . . : Հայաստան գիմող առաջին մոն-

զոլները իրանց առաջնորդի անունով Սելջուկ են կոչւում։ Գրանց Տաւրքիլ-բէկ առաջնորդը զօրեղանալով՝ Պարսկաստանին նուաճում է և հայերի համար նոր վորձանք դառնում։ Նրա եղբայր Ալփասլանը, վերջինիո որդի Մելիք-շահը-այդ քաջերը անպաշտպան հայ գիւղերն ու քաղաքները հիմնայատակ են անում . . . որովհետեւ յոյն աստիճանաւորները մի կողմից անտարբեր են լինում և միւս կողմից արդէն անկարող ոստիքի յարձակման առաջը առնել, մէկեկ մէկեկ քաղաքներն ու բերդերը յանձնում են կատաղի թշնամուն . . . Հայաստանի ընակշոթեան մեծագոյն մասը կոտորւում է։ Ազնուականութեան մեծագոյն մասը նախապէս իւր գլուխը ազատելով փախել էր յունական ներքին նահանգները և Կիլիկիա, իսկ մնացածն էր քաղմաթիւ հայերի հետ ընդունեց արշաւողների կրօնը՝ մահմետականութիւն, և հայ աղդի պատմաթիւնը XII դարում կարծես վերջանում է . . . գոնէ այդ, աղդի փառք ու պարծանք համարւող աւատական իշխանները մէջ տեղից վերանում են. . . Այժմ ըուն Հայաստանում չկայ հայ անուն կրող և ոչ մի իշխան . . . Հայերը իրանց կողքին նստած են տեսնում իրանցից մի քանի անգամ աւելի մեծ թւով մոնղոլներ և մոնղոլացած հայեր . . . Սելջուկից յետոյ XIII դ. Հայաստան են արշաւում Օսմանի առաջնորդութեամբ Օսմանլի թուրքերը։

Ով Հայոց պատմութիւնով հետաքրքրուել է, Հայոց գրականութիւնը ուսումնասիրել, նա անշուշտ կարդացած կը լինի XII դ. հեղինակ Արիստակէս Լաստիվերացուն. այդ իսկապէս լալկան, աղիողորմ ողբացողին, որ նմանւում է, իւր նկարագրութեան ճշգութեամբ՝ հրէից Յովուշիուին և ողբերով՝ Նըեմիային . . . Հնումն ընկնում էր գոռոզ հրէութիւնը, շիմանալով իւր այցելութեան ժամը, իսկ հայութիւնը իւր ո՞ր մեղքի համար էր ընկնում . . . Երուսաղէմը ճշմարիտ է պաշարուեց հռովմէական լէկէօններով և յաւիտենական քաղաքի շուրջը 600,000 խաչեր տնկուեցին և մարդիկ մոլեգնած, կորցրած արինակցական գութուցաւ, միմեանց տրորելով փախչում էին՝ ուր կարողանում էին . . . շատ շատերը կենդանի-կենդանի մտան կիսափոք գերեզմանները, որ Հռովմայեցոց վրէժիսնդրութիւնից ազատուեն . . . միւսները բարձրանում էին տանիքը, երրորդները ծառերի վերայ, բայց բոլորն էլ, ինչպէս վայրենի գաղաններ-որուում էին անողոք թշնամուց, մայրերը իրանք իրանց ձեռքով կոտորում էին իրանց մանուկներին և նրանց հետ միասին կրակի և ջրի մէջ ընկնում, թշնամու որից ազատուելու համար . . . և մի ժամանակ մինչեւ երկինք բարձրացող Կորաղիմն ու Կափառայումը, այրուեցին։ Աւերուեցին հրէից բոլոք քաղաք-

ներն ուշ շէները և տեղը մնացին աւելսակների բեկորներ, որոնց վերայ բուերն էին նստում, իսկ բեգուենները ամայացած երկրում թափառում ... Այդ, հրէից համար կործանիչ, 79 թիւը ինչո՞ւ կղկնուեց Հայաստանի գլխին XI դարում: Գեղեցիկ և վաճառաշահ Արծկէ, Մանազկերտ, Տիգրանակերտ, Անի . . . ինչո՞ւ հիմնայատակ եղան, նոցա ինչքերն ուշ բնակիչները սրի ճարակ դարձան, իսկ կենդանի մնացածները ինչպէս գաղաններ որսուեցին . . . : Աւերակներում բուեր բոյն գըին և անապատացած երկրում մոնղոլական հորդերը սկսեցին թափառել, իսկ ընիկ հայ ժողովուրդը, ով ինչպէս կարողացաւ, իւր գլուխը աշխատեց ազատել Հայաստանի ուահմաններից դուրս . . .

Հայերի մի մասը մնացած իշխաններով անցան Փոքր Հայաստան և Կիլիկիա: XI-XIV դարերում վերականգնեցին այնտեղ քաղաքական իշխանութիւն և ինքնուրոյն հայկական պետութիւն, Խուրենեանց անունով, որ տեղեց մինչև Լևոն VII Լուսինեան թագաւորը, և երբ Եղիպատոսի մամելուկները գերեցին սրան էլ, Կիլիկիան էլ բուն Հայաստանի նման քարուքանդ արին: Մեծ Հայաստանը քարուքանդ եղաւ, որովհետեւ մոնղոլները կարծում էին, որ սա պաշտպանուում է Բիւղանդիայից, և իրանց դէմ կը լինի. իսկ Կիլիկիան քարուքանդ եղաւ նոյնպէս, որովհետեւ մամելուքները կասկածում էին, թէ Կիլիկիան արեւմտեան քրիստոնեայ աղգերից պաշտպանուելով՝ իրանց դէմ կը լինի: Բայց մոնղոլներն ուշ մամելուքները խիստ մեծ կարսերութիւն էին տալիս հայերի՝ յոյների և եւրոպացւոց հետ կրօնակից լինելուն: Վերջինները, ինչպէս այն ժամանակ այնպէս էլ նրանց այժմեան արժանաւոր ժառանգները միայն իրանց շահի համար էին մտածում, և կրօնակցութիւնը կարեւըսութիւն ունէր և ունի, որքան այդ կրօնակցութիւնը կարող է ծառայել, նոր երկիր գրաւելու կամ նոր երկրում հաստատուելու համար կռուան ունենալու . . . : Հայի բազդի անիւը XI դարից փոխուել է հակառակ ուղղութեամբ և հայը 900 տարի է կեղեցւում հարստահարւում և նահատակւում է զանազան բիւղանդական, արաբական պետութիւններից և մոնղոլներից, թաթարներից ու թուրքերից: 900 տարուայ մէջ հայերութիւնը բուն Հայաստանում մազաչափ տնգամ չէ փոխուել . . . : 1393 թ. Լևոն Լուսինեան Ֆրանսիայում կրօնաւորական սքեմի տակ վախճանուեց և Կղեստինեաց վանքում իւր հետ թաղեց Հայաստանի ազատութեան վերջին նշոյլը . . . : XI դարում հայերին երազայոյս ցնորդներով մօլորեցնում էին Փարեզը, Լոնդոնը, իսկ XIX-XX դարում՝ Փարեզը, Լոնդոնը, Բերմինը . . . : Բագրատունեանց հարստութեան անկումից յետոյ

Վրաստանին սահմանակից մասնում առժամանակ մի փայլեցին Զաքարէ և Խվանէ եղբայրները, որոնք Վրաստամարա թագուհու զօրավարներն էին, և բուն Հայաստանում շարունակում էին Բագրատունի հարստութեան ժամանակ մեծ զարդացումն ստացած ճարտարապետական կերտուածքները շինելով վանքեր, և հին վանքերի առաջ հոյակապ գաւիթներ։ Զաքարեանց իշխանութիւնից յետոյ 14-րդ դարում սկսում է ամայանալ Անին. բնակիչները գաղթում են Խրիմ, Մոլգաւիա, Լեհաստան և այլ գաղթականական հոսանքին հետեւում են և Հայաստանի միւս կողմերի հայ ընտակիչները։

Հայաստանի աւերածութեան գործը շարունակեցին—հիւղանդական կայսերութիւնը՝ հայ նախարարական տներն ու եկեղեցական կենդրօնական վարչութիւնը վտարելով բուն երկրից. է. դարից սկսած՝ արաքները, Ժ. գարում՝ Սելջուկեան մողոլները Թուրքիւ-թէկի առաջնորդութեամբ. Ժ. գարում՝ Օսմանլու թուրքերը՝ Օսմանի առաջնորդութեամբ. Ժ. գարում՝ Մոնղոլները՝ Չինգիզ խանի առաջնորդութեամբ. Ժ. գարում՝ Մոնղոլները՝ Ղանկ-Թամուրի առաջնորդութեամբ. Ժ. գարում՝ մանր բռնակալները և քուրդ յեղապետները. Ժ. դարերում՝ մանր բռնակալները և քուրդ յեղապետները. Ժ. դարերում՝ Պարսից Շահ-Ալբասը աւերածութեամբ և մեծ գաղթականութեամբ. Ժ. դ. Պարսից Շահ-Ալբասը աւերածութեամբ և մեծ գաղթականութեամբ. Ժ. դ. Նազիր և Աղա—Մահամատ շահերը։

Ժ. դարում Հայերը սկսեցին հանգիստ առնել և զբաղուել իրանց մտաւոր և տնտեսական զարդացմամբ, որովհետեւ այդ ժամանակ ուսւոները առան պարսիկներից երեանը իւր նահանգով և թուրքերից՝ Ալխալցխայի, հուսկ ուրեմն եկարով շրջանները. Ի. դարում կրկնուեցին արիւնհեղութիւններն ու տնտեսական քայլայումն Թուրքաց Հայաստանում պետութեան թերագութեամբ։ Ուսւական կովկասի հայերի և թաթարների ընդհարումները թոյլ արձագանք էին Տաճկաստանում տեղի ունեցած պարբերական դէպքերի։

Հետեւ մեր պտամութեանը, տեսնում ենք, որ զինւորական դասի զեկավարութիւնը էր ազնուականների առանձնաշնորհութիւնն և այն՝ ժառանգաբար, իսկ դպրութիւնն ու գրագետութիւնը՝ հոգեորականութեան առանձնաշնորհութիւնը։

Ժ. դարում, Երբ իսպառ կործանուեց Հայաստանը, և հայ ընակչութիւնը կորցնելով իւր ներքին անկախութիւնը ստրկացաւ թշնամուն՝ չքացան նախարարական և ազնուական տներն էլ։ Եթէ թշնամին միայն Երկիրը նուաճած լինէր կարող էր ենթարկուել Երկրի քաղաքակրթութեանը և իրեւ փոքրամասնութիւն՝ ձուլուել ընիկների հետ. բայց այդպէս չեղաւ։ Որովհետեւ դարերի ընթացքում շարունակւող աւերն ու գաղթական դարերի ընթացքում շարունակւող աւերն ու գաղթա-

կանութիւնը ուժասպառ էին արել հայերին և հայերը բուն երկրում այնքան քայքայուած էին տնտեսապէս և այնքան սակաւաթիւ դարձած՝ որ անկարող էին իրանց ազգեցութեան ենթարկել իշխողներին։ Պարսկաստանում հակառակը եղաւ, ընիկները կուլ առւին եկուորներին։ Հայ տարրի համար այն ևս բաւական եղաւ, որ երկար դարեր մաքառելով և մեծամեծ զոհեր տալով գաղթականութեամբ, տնտեսական քայքայմամբ, նահատակութեամբ, կրօնափոխութեամբ,—բուն երկրում գարձեալ ազգաբնակութեան մի պատկառելի առկոս է կազմում։ Թշնամին յոդնեց հային ջնջելու գործում, բայց հայը դարձեալ շարունակեց բեղմնաւորուել իւր երկրում, ուղիղ այնպէս՝ ինչպէս ոչխարների հօտերը մորթւում, կոտորւում են, բայց սերունդը չէ սպառւում . . .։ Հայը մոնղոլից վախենում է, մողոլը հային արհամարհում . . .։ Իրերի այս գրութեան մէջ մայր երկրի հայը իւր յոյսը դնում է գաղթավայրերում ապրող իւր ազգակիցների վերայ, որոնք աշխատում են հայի բողոքը լսելի գարճնել խուլ եւրոպային . . .։ Հայի բողոքի ձայնը XVIII գարում լսում են միայն ոռուսները, որոնք իրանց քաղաքական շահն ես ի նկատի ունենալով իրանց հովանաւորութեան աակ են առնում հայերին և մի. մանաւանդ մթ. գարը կարծես հայի վերածնութեան դարն է դառնում . . .։ Հայը նորից սթափուում է. կենդրոնացնում իւր ոյժերը . . .։ Հայը, որ ճանաշուած էր որպէս վաճառական և երկրագործ ժողովուրդ, սկսում է ներկայացուցիչներ ունենալ զինուորականութեան, գիտութեան, արուեստի և գեղարուեստի մէջ։ Այնից զարմանալին հայի մէջ զինուորական ձգտումն պէտք էր համարել. երկար գարեր ստրկական վիճակի մէջ մնալուց յետոյ էլ երեսում է, որ հայի արեան մէջ զինուորական աւիւնը գեռ չէ մարել. . . Առաջաւոր Ասիայում հայ հողի վերայ խաչի և կիսալուսնի մաքառման ժամանակ հայ կամաւորները, հոգեսրականութիւնը, վերջապէս հայ զօրավարները—Մատաթով, Արդութեան, Բերուգով, Լազարեվ, Տէր-Դուկասով, Լորիս-Մելքոնվ, հայ երկրում, ոռուս-քրիստոնեայ զօրքի հետ միասին և նրանց շարքերում արիւն են թափում։ Հայը ոռուսների շարքում արիւն թափելիս երկու բան ունէր աչքի առաջ. 1, որ ինքն էլ ոռուսն էլ քրիստոնեայ խաչապաշտ են, ուրեմն կրօնակից եղբայր. 2, որ այդ կրօնակից ոռու եղբայրը արիւն թափելու է եկել իւր հայ եղբօրը մահմետական բռնութիւնից և ստրկութիւնից ազատելու համար։ Վերջին տարիներում եղաւ ժամանակ, երբ քիչ էր մնում, որ հայերը հիանթափուէին, մանաւանդ եկեղեցական կալուածների գրաւման,


հայ թուրքական ընդհարումների ժամանակ; Քարեբաղդաբար, շուտ անցան այդ ժամանակները, և 1905 թուին Կօմս Վօրոնցով Կաշկով Նշանակուելով Կովկասի փոխարքայ՝ մտաւ Կովկաս իրաղաղութիւն, հաւատ և վստահութիւն սփռելով ամեն ուրեք Հայը վերստացաւ իւր նախկին վստահութիւնը և զգուժէ, որ Ռուսաստանի հարաւային սահմանի վերայ, իբրև կրօնակից, կայ և մնում է ռուս պետութեան վստահելի տարր: Հայը Կովկասում կեանքի, գոյքի ապահովութիւն վայելելով՝ մահմետական պետութիւնների ճնշուած ռայեան և գեավուրը չէ: 1827—30 թուերի պարսկական և թուրքական պատեսազմներից յետոյ, Ռուս տիրապետութեան տակ մտած հայկական գուառներում 75—80 տարուայ ընթացքում հայը շենացը կործանուած քաղաքներն ու շեները. զինւորական նպատակով կառուցուած խճուղիներն ու երկաթուղիները հնարաւորութիւնն են տալիս հային վաճառականութիւնն ու արհեստները ծաղկեցնելու . . . Թեմական և ծխական դպրոցներում, հայ մանուկները սահմում են միջնակարգ և տարրական կրթութիւն: Քացւում է ձեմարանը Ա. Էջմիածնութ, առաջ են գոլիս մի շարք հրապարակախօսներ, որոնք զարթեցնում են հայի մեջ ինքնագիտակցութիւնը: Կազմակերպուեցին առաջադէմ և պահպանուական կուսակցութիւններ, որոնք իրանց օրգաններում ոկտցին կենսական խնդիրներ յարուցանել և քննադատել. առաջադիմականները քարոզում էին թօթափել հնութեան փոշին և ժամանակի պահանջին համակերպուել. պահպանողականները քարոզում էին առժամանակ մի կանգնեցրին ներքին, կուլտուրական կեանքը. կարծես մի տեսակ մոնղոլական արշաւանք ոկտուեց և այն՝ 20 րդ. դարի սկզբում: Հայ և Թաթար վերջին անգամ չափում էին և կոմենում էին իմանալ թէ ով է լինելու գերակշռողը: Սկզբում, կառավարութիւնը կարծես քաջալերում էր այդ կութը, որ ինքն էլ իմանայ, թէ ո՞րի կողմն է ոյժը: Հուոկ ուրեմն միջամտեց և հայ թաթարական արեւնահեղ կութեները դարգարեցին:

Գաղթականութիւնը, որ ընդհարձակ ծաւալ էր սահցել Թուրքիայում ամբողջ ֆիւ. դարում, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ թեթեակի կերպով սկսուեց Երևանի նահանգի նախիջնանի գուառում էլ. ըարեբաղդաբար շուտով էլ գագաթ աւատ ընդհարումների գագարելով: Պատերազմներն ու աւերածութիւնները խոկցանէ անտի մեծ հարուած են հասցը մեր երկրին, ուսկայն ամենամեծ հարուածը հասցը է գաղթականութիւնը: Յիշաւի, Հբապուրի է օտարութեան մեջ

շահած բարեկեցութիւնը, և աւելի գիւղին օտարութեան մէջ նարինջ ծախելը քան հայրենիքում՝ քրտինքով երկեր մշակելը, բայց օտարութեան շահն ու բարեկեցութիւնը վաղանցուկ են, հայրենի հողն ու նրա մշակութիւնը յաւիտենական:

Դարունակելի

Արք. Թի. Մարզարեանց



## Մ Ա Ն Կ Ա Վ Ա Բ Ժ Ա Կ Ա Ն

ԽՈՒՍԵՐԷՆԸ ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ



Ես հիմք ունիմ պնդելու, որ Թիֆլիսի լաւագոյն ուսումնարաններում—ներս գպրոցում, Յովնանեան և Գայիս անեան ուսումնարաններում—ոռուսերէն լեզուն շատ տկարամատներ է ստանում, հէնց սկզբից: Այս բանից շատ հեշտ է եզրակացնել, թէ գըսի քաղաքներում և գիւղերում որքան պէտք է լինի ոռուսերէնի արդիւնքը: Խնչով բացատրել այս տըգեղ երևոյթը: Ոռուսերէն լեզուի ուսուցիչների ցենզը միշտ բարձր է մեր մէջ. նոքա կամ համալսարականներ են, կամ ինստիտուտկաններ և գիմնազիոնականներ են, ուշիտելսկի ինստիտուտների և ոեմինալիների ընթացաւարաններ են, միով բանիւ լաւ հմտութիւն ունեցողներ: Մեր ուսումնարանների ըեւգչէում ոռուսերէնի համար միշտ առաջնակարգ ոռնիկ է նշանակւում: Ուսուցիչների և վարժուհիների բարեխղճութեան մասին տարակոյս ունենալու պատճառ չկայ: Թէ ժողովութեղը, թէ հոգեոր վարչութիւնը, թէ հոգաբարձութիւնները միշտ ջանք և պատրաստութիւն են ցոյց տալիս այդ լեզուի ուսուցումը ամենայն կերպով բարձր պահելու: Հապալնչէ արդեքը: — Անշուշտ մի ինչ որ նախապաշարում, մի ինչ որ մանկավարժական տկարութիւն, մի ինչ որ ծուռ հայեացը և ծուռ դատողութիւն: —

Նատ ժամանակ չէ, ինչ որ Թիֆլիսի Ա. Սարգսի աշակերտները Յովնանեան ուսումնարանի դահլիճում, հարցաքննութեան ենթարկուեցին ոռուսերէնից: Այդ փոքր հանդէսը, որի մասին մամուլը կանխաւ յայտարարել էր, գաւառական ուսու-